



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

02.05.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-22/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.03.2016թ. թիվ 03/73-3/4645-17 և 30.03.2017թ. թիվ 04/73-3/5616-17 գրություններով ներկայացված «Ռան-Օյլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-22/17 բողոք) պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.03.2017թ. թիվ ԴՎԱ/626 և ՀՀ դատախազության 16.03.2017թ. թիվ 10.1/2166-17 գրությունների հիման վրա, 16.03.2016թ. թիվ 03/73-3/4645-17 և 30.03.2017թ. թիվ 04/73-3/5616-17 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ռան-Օյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ)

ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ «Ռան-Օյլ» ՍՊԸ-ին Ֆուցակում ներառելու համար:

2. «Ռան-Օյլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 20.03.2017թ. թիվ 01/04.1/1030-17 և 31.03.2017թ. թիվ 02/04.1/1260-17 գրություններով դիմել է «Ռան-Օյլ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի 20.03.2017թ. թիվ 01/04.1/1030-17 գրությանը՝ Ընկերությունը 28.03.2017թ. թիվ 29 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) 9-րդ չափաբաժնի համար 26.12.2016թ. էլեկտրոնային եղանակով ստացվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցում, որին ի պատասխան՝ Ընկերությունը 28.12.2016թ. a.grigoryan@mil.am էլեկտրոնային հասցեին ուղարկել է առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, նախկինում պատշաճ ձևով իրականացրած համանման մեկ պայմանագիր և հանձնման-ընդունման ակտերը:

Այնուհետև 18.01.2017թ. Ընկերությունը ստացել է ծանուցում, որ Ընկերության կողմից ուղարկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում, քանի որ ռուսերեն լեզվով է, պետք է լինի հայտերեն լեզվով: Շտկելով անհամապատասխանությունը 19.01.2017թ. մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվել է թարգմանված տարբերակը: Իսկ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա հարկային պարտավորությունները մարվել են ժամանակացույցին համապատասխան:

Ընկերությունը վերը նշված գրությանը կից ներկայացրել է «ran-oil@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջից քաղվածք, որի համաձայն՝ նշված էլեկտրոնային փոստից **19.01.2017թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «a.grigoryan@mil.am» էլեկտրոնային հասցեին ուղարկվել են համապատասխան փաստաթղթերը:**

Ի պատասխան Կենտրոնի 31.03.2017թ. թիվ 02/04.1/1260-17 գրության՝ Ընկերությունը 19.04.2017թ. թիվ 42 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը որևէ խախտում թույլ չի տվել, քանի որ Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելուց մեկ օր առաջ՝ 25.11.2016թ. Ընկերությունը կատարել է հարկային համապատասխան վճարումները և հաջորդ օրը Ընկերությունը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգին: Այնուհետև պարզվել է, որ նշված գումարը հայտը ներկայացնելու օրը՝ 26.11.2016թ. չի նստել համապատասխան հաշվեհամարին, քանի որ վճարման հանձնարարականներում առկա են եղել թերություններ:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել կեղծիք, քանի որ Ընկերությունը ենթադրել է, որ պարտականությունը նախօրոք կատարված է եղել և Ընկերությունը այլևս պարտք չունի:

Վերոհիշյալ գրությամբ Ընկերությունը հայտնել է նաև, որ 28.02.2017թ. հայտը ներկայացնելուց մեկ օր առաջ՝ 27.02.2017թ. Ընկերության և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի միջև կնքվել է վճարման ժամանակացույց, որով առկա պարտքի առաջին մարումը պետք է լիներ 2017թ. մարտ ամսին: Ուստի Ընկերությունը մասնակցել է՝ իմանալով, որ առաջին մատակարարումը պետք է կատարվի մարտ ամսին:

«Ռան-Օյլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 21.04.2017թ. ժամը 17:10-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-22/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.03.2017թ. թիվ ԴՎԱ/626 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է

ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղ զբողեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն՝ «Ռան-Օյլ» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն: Ըստ առանձին չափաբաժինների «Ռան-Օյլ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Ընկերությունը ծանուցվել է հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 21.04.2017թ. ժամը 17:10-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-22/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՀՀ դատախազության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ դատախազությունը 16.03.2017թ. թիվ 10.1/2166-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ դատախազության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԳ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Ռան-Օյլ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 21.04.2017թ. ժամը 17:10-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-22/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. ՍՑ-ԳԲԽ-22/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 16.03.2016թ. թիվ 03/73-3/4645-17 և 30.03.2017թ. թիվ 04/73-3/5616-17 գրություններով ներկայացված «Ռան-Օյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգ

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով «Ռան-Օյլ» ՍՊԸ-ն **26.11.2016թ.** հայտ է ներկայացրել:

- Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտներին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին էնթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 26.12.2016թ. հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Ռան-Օյլ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 28.12.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը **26.11.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 14 987 764 ՀՀ դրամի չափով:**

• Ընկերությունը Կենտրոնին ներկայացրել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ի 25.11.2016թ. թիվ 161130037828050, 25.11.2016թ. թիվ 161208028137050-1, 25.11.2016թ. թիվ 161130095747001, 25.11.2016թ. թիվ 161208027653050, 25.11.2016թ. թիվ 161130095753001 վճարման հանձնարարականները, որոնց համաձայն՝ 25.11.2016թ. Ընկերության կողմից համապատասխան հարկատեսակների գծով կատարվել են համապատասխանաբար՝ 7 906 800 ՀՀ դրամ, 380 000 ՀՀ դրամ, 3 591 225 ՀՀ դրամ, 557 000 ՀՀ դրամ, 2 661 300 ՀՀ դրամ գումարի վճարում:

1.1 ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգ

➤ Ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող 2, 3, 4, 5, 6, 9 չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդ որում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Ռան-Օյլ» ՍՊԸ-ն պարտավորվել է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը:

➤ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2016թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով:

➤ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով 26.12.2016թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ առաջարկել է «Ռան-Օյլ» ՍՊԸ-ին ներկայացնել հրավերով

նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որոնք Ընկերության կողմից ներկայացվել են 28.12.2016թ.:

➤ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.01.2017թ. ժամը 11-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով արձանագրել է անհամապատասխանություն Ընկերության կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում, այն է՝ ««Ռան-Օյլ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացնել 9-րդ չափաբաժնի ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, այլ ներկայացվել է ռուսերեն լեզվով փաստաթուղթ, որը չի կարող համարվել ընդունելի որպես տեխնիկական բնութագիր: Անհրաժեշտ է ներկայացնել հրավերով սահմանված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը հայերեն լեզվով»:

➤ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, 18.01.2017թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «Ռան-Օյլ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ ներկայացնել հրավերով սահմանված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը հայերեն լեզվով:

➤ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը, այն պատճառաբանությամբ, որ «Ռան-Օյլ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

➤ «Ռան-Օյլ» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնին ներկայացվել է «*ran-oil@mail.ru*» էլեկտրոնային փոստի համապատասխան էջից քաղվածք, որի համաձայն՝ նշված էլեկտրոնային փոստից 19.01.2017թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «*a.grigoryan@mil.am*» էլեկտրոնային հասցեին ուղարկվել են պահանջվող համապատասխան փաստաթղթերը:

2. ՀՀ դատախազության կողմից կազմակերպված «ՀԳԴ-ՇՀԱՊՁԲ-15/6»

ծածկագրով ընթացակարգ

- «Ռան-Օյլ» ՍՊԸ-ն ՀՀ դատախազության կողմից ՀՀ դատախազության կարիքների համար կազմակերպված «ՀԳԴ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով **28.02.2017թ.** հայտ է ներկայացրել:

- Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 06.03.2017թ. հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Ռան-Օյլ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.03.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը **28.02.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 29 266 704 ՀՀ դրամի չափով:**

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.03.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ Ընկերության հայտը մերժվել է:

- Ընկերությունը Կենտրոնին ներկայացրել է «Ռան-Օյլ» ՍՊԸ-ի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի միջև 27.02.2017թ. կնքված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների աստիճանական մարման մասին ժամանակացույցը, որի համաձայն՝ **Ընկերությունը պարտավորվել է 2017թ. մարտ, ապրիլ, մայիս ամիսներին վճարել համապատասխանաբար՝ 13 000 000 ՀՀ դրամ, 1 400 000 ՀՀ դրամ, 8 827 359 ՀՀ դրամ գումար:**

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության 13.03.2017թ. թիվ ԴՎԱ/626 և ՀՀ դատախազության 16.03.2017թ. թիվ 10.1/2166-17 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

* Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է

իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Ռան-Օյլ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի **26.11.2016թ.** հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 28.12.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը **26.11.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 14 987 764 ՀՀ դրամի չափով:**

Ընկերությունը Կենտրոնին ներկայացրել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ի 25.11.2016թ. թիվ 161130037828050, 25.11.2016թ. թիվ 161208028137050-1, 25.11.2016թ. թիվ *161130095747001, 25.11.2016թ. թիվ 161208027653050, 25.11.2016թ. թիվ 161130095753001 վճարման հանձնարարական-ները, որոնց համաձայն՝ **25.11.2016թ.** Ընկերության կողմից համապատասխան հարկատեսակների գծով կատարվել են համապատասխանաբար՝ 7 906 800 ՀՀ դրամ, 380 000 ՀՀ դրամ, 3 591 225 ՀՀ դրամ, 557 000 ՀՀ դրամ, 2 661 300 ՀՀ դրամ (ընդհանուր՝ 15 096 325 ՀՀ դրամ) գումարի վճարումներ:

Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտնել է, որ վճարման հանձնարարականներում առկա թերության պատճառով վերը նշված գումարը՝ Ընթացակարգի հայտը

ներկայացնելու օրվա՝ 26.11.2016թ. դրությամբ չի փոխանցվել համապատասխան հաշվեհամարներին, մինչդեռ Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, հաշվի առնելով մեկ օր առաջ վճարում կատարելու հանգամանքը:

Խորհուրդը գտնում է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում Ընկերության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի կարող դիտարկվել որպես Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում, քանի որ «Ռան-Օյլ» ՍՊԸ-ն, համաձայն ներկայացված վճարման հանձնարարականների, 25.11.2016թ. կատարել է համապատասխան հարկատեսակների գծով վճարումներ, որոնք սակայն, նշված հանձնարարականներում առկա թերության պատճառով չեն փոխանցվել համապատասխան հաշվեհամարներին: Միևնույն ժամանակ Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը 25.11.2016թ. փաստացի կատարել է իր վրա դրված պարտականությունը՝ անկախ այն հանգամանքից, որ վճարումը չի փոխանցվել համապատասխան հաշվեհամարին, ուստի Ընկերությունը օբյեկտիվորեն կարող էր ենթադրել, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Հետևաբար Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում և Ընկերությանը սույն հիմքով Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

**1.1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով
ընթացակարգ**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված

որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

* «Դան-Օյլ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի **26.11.2016թ.** հայտի թիվ 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող 2, 3, 4, 5, 6, 9 չափաբաժիններում նշված

ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդ որում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Ռան-Օյլ» ՍՊԸ-ն պարտավորվել է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2016թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով 26.12.2016թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ առաջարկել է «Ռան-Օյլ» ՍՊԸ-ին ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որոնք Ընկերության կողմից ներկայացվել են 28.12.2016թ.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.01.2017թ. ժամը 11-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով արձանագրել է անհամապատասխանություն Ընկերության կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում, այն է՝ «Ռան-Օյլ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացնել 9-րդ չափաբաժնի ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, այլ ներկայացվել է ռուսերեն լեզվով փաստաթուղթ, որը չի կարող ընդունել համարվել որպես տեխնիկական բնութագիր, ուստի անհրաժեշտ է ներկայացնել հրավերով սահմանված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը հայերեն լեզվով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, 18.01.2017թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «Ռան-Օյլ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ ներկայացնել հրավերով սահմանված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը հայերեն լեզվով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը, այն պատճառաբանությամբ, որ «Ռան-Օյլ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի

ներկայացվել ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, մինչդեռ Խորհուրդը արձանագրում է, որ «Ռան-Օյլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է **«ran-oil@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջից քաղվածք, որի համաձայն՝ նշված էլեկտրոնային փոստից 19.01.2017թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «a.grigoryan@mail.am» էլեկտրոնային հասցեին ուղարկվել են պահանջվող համապատասխան փաստաթղթերը:** Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը կատարել է Կարգի 51-րդ կետով նախատեսված պարտականությունը, այն է՝ ստանալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցումը (18.01.2017թ.) մեկ աշխատանքային օրվա ընթացքում (19.01.2017թ.) կատարել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, այն է՝ շտկել է առկա անհամապատասխանությունը՝ համապատասխան փաստաթղթերը ուղարկելով գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին: Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերությանը սույն հիմքով Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

2. ՀՀ դադարախազության կողմից կազմակերպված «ՀԳԴ-ՇՀԱՊՁԲ-15/6»

ծածկագրով ընթացակարգ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն «Ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

«Ռան-Օյլ» ՍՊԸ-ն ՀՀ դատախազության կողմից կազմակերպված «ՀԳԴ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով **28.02.2017թ.** ներկայացրած հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.03.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը **28.02.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 29 266 704 ՀՀ դրամի չափով:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.03.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ Ընկերության հայտը մերժվել է:

Ընկերությունը Կենտրոնին ներկայացրել է «Ռան-Օյլ» ՍՊԸ-ի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի միջև 27.02.2017թ. կնքված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների աստիճանական մարման մասին ժամանակացույցը, որի համաձայն՝ **Ընկերությունը պարտավորվել է 2017թ. մարտ, ապրիլ, մայիս ամիսներին վճարել համապատասխանաբար՝ 13 000 000 ՀՀ դրամ, 1 400 000 ՀՀ դրամ, 8 827 359 ՀՀ դրամ գումար:**

Խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում Ընկերության կողմից «ՀԳԴ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի կարող դիտարկվել որպես Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում, քանի որ Ընկերության և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի միջև 27.02.2017թ. կնքված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների աստիճանական մարման մասին ժամանակացույցի համաձայն՝ **Ընկերությունը պարտավորվել է առաջին վճարումը կատարել 2017թ. մարտ ամսին, մինչդեռ Ընկերության կողմից «ՀԳԴ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացվել է 28.02.2017թ.:** Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերությանը սույն հիմքով ևս Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 16.03.2016թ. թիվ 03/73-3/4645-17 և 30.03.2017թ. թիվ 04/73-3/5616-17 գրություններով ներկայացված «Ռան-Օյլ» ՍՊԸ-ին (00433237) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կա՛րող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Հայրապետյան Գևորգ

Անդամ՝



Շիրինյան Սոնա